

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ  
ԳՈՐԾԵՐՈՎ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ  
ԳՆԱՅԱՏՈՒՄ**

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի/Անկախ  
Պետությունների Համագործակցության սարածաօրջանային գրասենյակ

Հունվար 2010

## Բովանդակային ցանկ

<b>Գնահատման Առաքելության մասին .....</b>	<b>3</b>
<b>Ընդհանուր Տեղեկատվություն .....</b>	<b>4</b>
<b>Ամփոփում .....</b>	<b>7</b>
<b>Մաս I. Անչափահասների գործերով արդարադատության ընթացքը .....</b>	<b>10</b>
1) Քաղաքականություն և քաղաքացիություն .....	10
2) Օրենսդրական բարեփոխումներ .....	10
3) Վարչական և կառուցվածքային բարեփոխումներ .....	12
4) Առկա ռեսուրսների բաժնում .....	12
5) Վերադասարանում և կարողությունների ձևավորում .....	13
6) Հաշվետվողականության մեխանիզմներ .....	14
7) Համակարգում .....	15
8) Տեղեկատվություն և հեռագրություններ .....	15
<b>Մաս II. Անչափահասների գործերով արդարադատության համակարգը Հայաստանում .....</b>	<b>16</b>
1) Կանխարգելում .....	16
2) Կասկածյալների ձերբակալումը և հարցաքննությունը .....	17
3) Մինչդատական կալանավորումը և կալանավորումը դատական փնտրության ընթացքում .....	21
4) Այլընտրանքային միջոցներ և վերականգնողական արդարադատություն .....	23
5) Քրեական դատաստանատվություն և դատախազ .....	25
6) Դատադատարարական անչափահասների վերականգնումը .....	27
7) Քրեական դատաստանատվության սարիֆի չհասած երեխաների կողմից ֆրոնտեն հեռադիմացի արտադատություն .....	30
<b>Մաս III. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությունն անչափահասների գործերով արդարադատության բարեփոխումներին .....</b>	<b>35</b>
<b>Մաս IV. Եզրահանգումներ և առաջարկություններ .....</b>	<b>38</b>
ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ .....	38
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ .....	40
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ .....	43
<b>Հավելված 1. Տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն .....</b>	<b>50</b>
<b>Հավելված 2. Անձինք, ում հանդիպել ենք.....</b>	<b>55</b>
<b>Հավելված 3. Օգտագործված փաստաթղթեր.....</b>	<b>57</b>
<b>Հավելված 4. Անչափահասների գործերով արդարադատությունը Հայաստանում. օրենքի հետ կոնֆլիկտ ունեցած անչափահասների Տեսակետները (ԱՍՏ/ԵԱՀԿ).....</b>	<b>59</b>

*Անչափահասների գործերով արդարադատության համակարգը երկու նպասակ է հետապնդում՝ հանցավորության դեմ պայքարը և իրավախախտների նորմալ զարգացման ապահովումը: Մեկն պետք է հանցավորության դեմ պայքարենք այնպես, որ չվնասենք անհասին: Պատշաճ վերաբերմունքը նպաստում է հանցավորությունը կանխելուն, ոչ պատշաճը ծնում է ագրեսիվություն:*

*— Հայաստանի Հանրապետության ոստիկանության բննչական գլխավոր վարչության պետի տեղակալ*

*Ազատությունը պատերի ներսում կամ պատերից դուրս գտնվելու մասին չէ միայն: Այն վերաբերում է նաև որպես անհաս ապրելու ունակությանը:*

*— Անչափահասների համար նախատեսված ֆրեակասարողական հիմնարկի դասապատրաստողների հետ աշխատող «ՏՐՏՈՒՄ» հասարակական կազմակերպության նախագահ*

## Գնահատման Առաքելության մասին

Առաքելությունն իրականացվել է 2009 թվականի սեպտեմբերի 7-ից 18-ը: Գնահատման թիվում ընդգրկված էին միջազգային փորձագետ Դեն Օ'Դոննելը և տեղացի փորձագետ Լիլիթ Պետրոսյանը: Աջակցել է Հայկ Խեմչյանը՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակից:

Գնահատման թիվը հարցազրույցներ է ունեցել Արդարադատության փոխնախարարի, Արդարադատության նախարարության ֆրեակասարողական վարչության, Արսաֆին գործերի նախարարության, Կրթության և գիտության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Դատական դեպարտամենտի ներկայացուցիչների, Ոստիկանության անչափահասների գործերով բաժնի ղեկավարի և Զննչական գլխավոր վարչության ղեկավարի, Դատական դորոցի և Դատախազության դորոցի սնուցիչների, Իրավաբանական ինստիտուտի (որը վերադասարանում է ֆրեակասարողական ծառայության անձնակազմը) սնուցիչի, ինչպես նաև Ոստիկանության ակադեմիայի ներկայացուցիչի հետ:

Թիվը նաև հանդիպել է Ազգային ժողովի Մարդու իրավունքների և հանրային հարցերի մեքսիկական հանձնաժողովի նախագահի, առաջին ասյանի դասարանի երկու դասավորների, Մարդու իրավունքների դաշտի գրասենյակի ներկայացուցչի, Փաստաբանների դաշտի նախագահի, Հանրային դաշտի գրասենյակի ղեկավարի, Զերեակասարողական հիմնարկների մոնիթորինգի խմբի ղեկավարի և մեկ այլ անդամի, Ջերբակավածներին դաշտի վայրերի մոնիթորինգի խմբի անդամի, մասնավոր գործունեություն ծավալող փաստաբանի և տեղական ու միջազգային 6 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Այցելություններ են կատարվել անչափահասների ուղղիչ հիմնարկ և կալանավորվածներին դաշտի վայրի անչափահասների բաժանմունք, ոստիկանության ենթակայության ներքին գեներալ ձերբակալվածներին դաշտի վայր, հակասոցիալական վարժ ունեցող երեխաների համար նախատեսված երկու դորոց, Երեխաների աջակցության կենտրոն (նախկինում՝ Ընդունման և կողմնորոշման կենտրոն), Լոռու մարզի Վանաձորի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և Համայնքային վերականգնողական կենտրոն:

Նաև հանդիպումներ են կազմակերպվել Եվրոպայում անվսանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության օրենքի գերակայության նախաձեռնության (ABA/ROLI) հետ: Առաքելության վերջին օրը գնահատման թիվը վերոհիշյալ նախարարությունների, գործակալությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների մեծամասնությանը համառոտ ներկայացրեց առաքելության արդյունքները:

Հարցված անձանց և գործածված փաստաթղթերի ցանկերը կցվում են (տես Հավելված 2 և Հավելված 3):

## Ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ-ից անկախացել է 1991 թվականին: 1995 թվականին ընդունված Սահմանադրությունը փոփոխվել է 2005 թվականին: Հայաստանի Հանրապետությունը նախագահական հանրապետություն է՝ միադաշտ օրենսդիր մարմնով՝ Ազգային ժողովով: Հայաստանի Հանրապետությունն ունիսար ղեկավարություն է՝ վարչական նկատառումներով բաժանված 10 մարզի:

Բնակչությունը մոտավորապես 3 միլիոն է, որի 26%-ը 18 տարեկանից ցած է<sup>1</sup>: Գրեթե երկու միլիոնը ֆաղափային բնակչությունն է, որից մեկ միլիոնն ամուսնացած է մայրաքաղաքում<sup>2</sup>: Բնակչության 98%-ը հայեր են, և 95%-ը՝ առաջնական ֆրիսոնյաներ: Խոստրագույն էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունը եզդիներն ու ֆրեյերն են, ովքեր կազմում են բնակչության 1.2%-ը<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետությունն Անկախ ղեկավարությունների համագործակցության հիմնադիր անդամ է: ԵԱՀԿ-ին միացել է 1992, իսկ Եվրոպայի խորհրդին՝ 2001 թվականին: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիային միացել է 2002 թվականին:

ԵՄ-Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականին<sup>4</sup>: ԵՄ-Հայաստան գործընկերությունների ծրագիրն անդրադառնում է դասախրավական, ֆրեակասարողական և ուսիկանական համակարգերի բարեփոխումներին, սակայն հասկալալա անչափա-հասների գործերով արդարադատության հետ կաղված գործողություններ չի նախատեսում<sup>5</sup>:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 1992 թվականին: Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն վավերացված կամ հաստատված միջազգային դալմանագրերը ներդեսական օրենսդրության բաղկացուցիչ մասն են, և եթե վավերացված միջազգային դալմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, աղա կիրառվում են այդ նորմերը:

Հաստատվել է երեխաների իրավունքների դալմանության 2004-2015թթ. գործողությունների ազգային ծրագիր: 2005 թվականին ստեղծված Երեխաների իրավունքների դալմանության ազգային հանձնաժողովը դալմանախնամալու է այդ ծրագրի իրականացումը վերահսկելու, երեխաների իրավունքների հետ կաղված խնդիրները վերլուծելու և «Երեխայի իրավունքների և ռալերի դալմանությունն իրականացնող դեսական կառավարման մարմինների, հասարակական, ֆաղափական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցությանն» աղակցելու համար<sup>6</sup>: Հանձնաժողովը կազմված է բացառաղալա բարձրասիձան դեսական դալմանությանից և դեկավարվում է Ալխասանփի և սղիալական հարցերի նախարարի կողմից:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային միանալիս Հայաստանի Հանրապետությունն ուներ անչափախասների գործերով արդարադատության թույլ համակարգ: Չկային մասնագիտացված դասա-

<sup>1</sup> Տե՛ն [www.unicef.org/infobycountry/armenia-statistics.html](http://www.unicef.org/infobycountry/armenia-statistics.html), կայքէջ այցելությունը կատարվել է 2010 թվականի հունվարի 31-ին:

<sup>2</sup> ՀՀ ազգային վիձակագրական ծառայություն, Հայաստանի ժողովրդագրական ձեռնարկ, 2009թ., մաս II, էջ 34. հասանելի է [www.armstat.am/file/article/demos-09-2.pdf](http://www.armstat.am/file/article/demos-09-2.pdf) կայքէջում, այցելությունը կատարվել է 2010թ. հունվարի 31-ին:

<sup>3</sup> Ազգային փոքրամասնությունների իրավունքների դալմանության մասին ռջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի համաձայն Հայաստանի ներկայացրած երկրորդ զեկույց, Եվրոպայի խորհուրդ, ACFC/SR/II(2004)010, 2004, հասանելի է [www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3-FCNMdocs/PDF-2nd-SR-Armenia-en.pdf](http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/3-FCNMdocs/PDF-2nd-SR-Armenia-en.pdf) կայքէջում: Կայքէջ այցելությունը կատարվել է 2010 թվականի հունվարի 31-ին: Անկախությունից հետո ծագած հակամարտության արդյունքում խոստրագույն աղրբեղանական փոքրամասնությունը լքել է երկիրը:

<sup>4</sup> Եվրոպական համայնքների հանձնաժողով, Հայաստանի վերաբերյալ վերը նշված ԵՀԶ հալվեսվության հալվելված COM(2005) 72 վերջնական, բաժին 1.1:

<sup>5</sup> Տե՛ն [ec.europa.eu/world/enp/pdf/action-plans/armenia-enp-ap-final-en.pdf](http://ec.europa.eu/world/enp/pdf/action-plans/armenia-enp-ap-final-en.pdf), կայքէջ այցելությունը կատարվել է 2010 թվականի հունվարի 31-ին: 2007-2011 թվականների երկրի ռազմավարության վերաբերյալ համաձայնագիրը ևս չի անդրադառնում անչափախասների գործերով արդարադատությանը: Տե՛ն [ec.europa.eu/world/enp/pdf/country/enpi-csp-armenia-en.pdf](http://ec.europa.eu/world/enp/pdf/country/enpi-csp-armenia-en.pdf): Կայքէջ այցելությունը կատարվել է 2010 թվականի հունվարի 31-ին:

<sup>6</sup> Հայաստանի Հանրապետության վարչաղալի 2005 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 835-Ն որոլում (այն փոխարինեղ Անչափախաս երեխաների հետ տարվող ալխասանքները համակարգող հանրաղեսական հանձնաժողովին, որը ստեղծվել էր 1999 թվականին):

րաններ անչափահասների վերաբերյալ գործերով, չնայած ընդունված էր նման գործերն այս կամ այն դասարանի նախագահի կողմից ֆննելու ոչ դաժնամիտ դրակսիկա: Գոյություն ունեւ անչափահասների գործերով ուսիկանության բաժին, որի հիմնական գործառույթը հանցագործություններ կասարած կամ հակասոցիալական վարք ունեցող փոքահասակ երեխաների հեւ կանխարգելիչ աշխատանք կասարելն էր: Կար մեկ հասուկ հասասոթություն դասադարսյալ անչափահասների, և միևնույն հիմնարկի ներսում ևս մեկը՝ կալանավորված անչափահասների համար: Քրեական հանցանք կասարած փոքահասակ երեխաների և հակասոցիալական վարք ունեցող ցանկացած սարիփի երեխաների վերաբերյալ գործերով զբաղվում էին անչափահասների գործերով հանձնաժողովները, որոնք իրավասու էին տեղավորելու այդ երեխաներին «հասուկ դորոցներում», որոնցում տիրում էին վասթար դայմաններ ու ճնճող վերաբերմունք: Ուղղիչ և ազասազրկման վայրերում սարածված էին խմբային դասիժներն ու ֆիզիկական չարասահումները: Անչափահասների գործերով արդարադասության վերաբերյալ հասուկ օրենսդրություն չկար:

Նախան անկախությունն անչափահասների հանցավորությունը փոքր թիվ էր կազմում: Երեխայի իրավունքների կոմիտեին Հայաստանի Հանրադեոության ներկայացրած նախնական զեկույցում նշված էր, որ «1989 թվականին անչափահասների կողմից կասարված հանցագործությունների թիվն ամենացածրն է ԽՍՀՄ 15 հանրադեոությունների համեմասությամբ», իսկ երկորդ զեկույցում ասված է, որ 1989 թվականին անչափահասների կողմից կասարվել է 243, իսկ 1990-ին՝ 256 հանցագործություն<sup>7</sup>: Անկախության առաջին երկու տարիներին հանցավորության վերաբերյալ տեղեկասվություն առկա չէ, սակայն տասնամյակի մնացած տարիների վերաբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ անչափահաս իրավախախտների և վերջիններիս կողմից կասարվող հանցագործությունների թիվը նվազել է 1993-1995 թվականներին, այնուհետ զագաթնակետին է հասել 1997 թվականին, 1998 կսուկ նվազել է, ինչն էլ կայուն է մնացել մինչև այդ տասնամյակի ավարտը<sup>8</sup>: Վերջին տարիների վերաբերյալ ուսիկանության ֆննչական վարչության կողմից արձանագրված թվերն էլ ավելի ցածր են<sup>9</sup>:

Քրեական հետադնման ենթարկված անչափահասների թիվը, համաձայն տեղեկությունների, ավելի ֆան կրկնադասկվել է անկախության առաջին տարիներին՝ 1990թ. 134 ցուցանիտից հասնելով 306-ին՝ 1994 դրությամբ<sup>10</sup>: Վերջին տարիներին (2005-2008) այդ թիվը համեմասաբար կայուն է մնացել՝ 146-ից 156<sup>11</sup>:

Հանցագործությունների համար դասադարսված անչափահասների թիվը կսուկ նվազեց 1997 թվականից հետո (1997 թվականի 424-ից հասնելով 201-ին՝ 2002 թվականի դրությամբ), իսկ վերջին տարիներին էլ ավելի է նվազել<sup>12</sup>: Անչափահաս դասադարսյալների տկոսը համեմասաբար կայուն է մնացել, սակայն ենթադրվում է, որ նվազման հիմնական դասձառն ավելի շուտ երկում տնետության և

7 Երեխայի իրավունքների կոմիտե, Անդամ երկրների կողմից Կոնվենցիայի 44-րդ հողվածի հիման վրա ներկայացված զեկույցների ուսումնասիրություն, 1995թ. անդամ երկրների ներկայացրած նախնական զեկույցներ, Հայաստան, CRC/C/28/Add.9, para.151:

8 1993 թվականին 552 անչափահաս իրավախախտների կողմից կասարվել է 436 հանցագործություն, 1995 թվականին 444 անչափահաս իրավախախտների կողմից՝ 420 հանցագործություն, 1997-ին՝ 975 անչափահաս իրավախախտների կողմից՝ 741 հանցագործություն, 1998 թվականին 479 անչափահաս իրավախախտների կողմից՝ 589 հանցագործություն (Գ. Ջայլզ՝ հղում կասարելով Արդարադասության նախարարության չիրադարակված տեղեկություններին):

9 2004 թվականին 211 իրավախախտների կողմից կասարվել է 175 հանցագործություն, 2005-ին 185 անչափահաս իրավախախտների կողմից՝ 150 հանցագործություն, 2007 թվականին 199 անչափահաս իրավախախտների կողմից՝ 161 հանցագործություն, և 2008-ին 223 անչափահաս իրավախախտների կողմից կասարվել է 174 հանցագործություն՝ համաձայն զնահասման թիմին տրամադրված չիրադարակված տվյալների:

10 Ձեկույց անչափահասների գործերով արդարադասության և անչափահասների հանցավորության վերաբերյալ, 2001թ., էջ 28: Համաձայն Ներքին գործերի նախարարության կողմից ներկայացված թվերի, որոնք մեջբերված են CRC/C/93/Add.6 փաստաթղթում, անչափահասների կողմից կասարված հանցագործությունների թիվը 1989թ. 243-ի համեմաս աճել է մինչև 403՝ 1995 թվականի դրությամբ (1994 թվականի վերաբերյալ թվերը բացակայում են): Տես Երեխայի իրավունքների կոմիտե, Անդամ երկրների կողմից Կոնվենցիայի 44-րդ հողվածի հիման վրա ներկայացված զեկույցների ուսումնասիրություն, Հայաստանի երկորդ դարբերական զեկույց, CRC/C/93/Add.6, para.391, աղյուսակ 25:

11 Ուսիկանության կողմից զնահասման թիմին տրամադրված չիրադարակված տեղեկասվություն:

12 198՝ 2003 թվականին, 222՝ 2004 թվականին, 192՝ 2005 թվականին, 168՝ 2006 թվականին, 179՝ 2007 թվականին և 178՝ 2008 թվականին: Արդարադասության նախարարության կողմից ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին տրամադրված չիրադարակված տեղեկասվություն (2004-2008 թվականներին «դասարան ուղարկված» երեխաների թիվն էլ ավելի ցածր էր, համաձայն ուսիկանության կողմից զնահասման թիմին տրամադրված չիրադարակված տեղեկասվության: Տես III հավելվածի մաս 2-ը):

սոցիալական թայմանների բարելավումն է, քան անչափահասների նկատմամբ իրականացվող ֆա-  
 դաբանականություններն ու ծրագրերը<sup>13</sup>: 2002-ից 2005 թվականներին դասադասարկված անչափահասների  
 թիվն իսկապես կայուն է եղել, մինչդեռ չափահաս դասադասարկվածների թիվն աճել է:

Ազատությունից զրկելու հետ կապված դաշիժ կրող կամ կալանավորված անչափահասների թվերը  
 վերջին տասնամյակում նվազել են: 1998 թվականին անչափահասների գաղութում դաշիժ էր կրում  
 82 անչափահաս, իսկ կալանավորվածների թիվը 45-ն էր, չհաշված 16 տարին լրացած 4 աղջիկնե-  
 րին, ովքեր դաշիժը կրում էին կանանց գաղութում<sup>14</sup>: 2005 թվականին դասադասարկվածների թիվը 31-ն  
 էր, կալանավորվածներինը՝ 18-ը<sup>15</sup>: Գնահատման առաջնության ժամանակ դասադասարկվածների թիվը  
 18-ն էր (այդ թվում՝ 18 տարին լրացած 4 թե 5 տղաները), իսկ կալանավորվածներինը՝ 24: Կանանց  
 մասնաշեղջում դաշիժ կրող աղջիկներ չկային:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապե-  
 տության նախնական զեկույցը դասարկվել է 1997 թվականին, որը Երեխայի իրավունքների կոմիտե  
 (այսուհետ՝ Կոմիտե) ուսումնասիրել է 2000-ին<sup>16</sup>: Երկրորդ զեկույցը ներկայացվել էր 2002-ին և ուսում-  
 նասիրվել՝ 2004-ին<sup>17</sup>: Երկու դեղիքում էլ կոմիտեն մտահոգություն էր արտահայտել «անչափահասների  
 գործերով արդարադատության համակարգի բացակայության, մասնավորապես՝ հասուկ օրենքների, ըն-  
 թացակարգերի և անչափահասների գործերով դասարանների վերաբերյալ»<sup>18</sup>: Կոմիտեի կողմից 2000  
 թվականին արտահայտված և 2004-ին վերահաստատված մտահոգությունը վերաբերում էր հետևյալին.  
 «մինչդասական կալանի սևողությունը և այդ ընթացքում սահմանափակ այցելությունները, ազա-  
 սագրկման օգտագործումը ոչ որոշե ծայրահեղ միջոց, դասավճիռների անհամամասնությունը հան-  
 ցանքի ծանրությանը, ազասագրկման թայմանները և անչափահաս իրավախախտների ֆիզիկական և  
 հոգեբանական վերականգնման ու սոցիալական վերաինտեգրման թայմանների բացակայությունը»<sup>19</sup>:

Կոմիտեի կողմից 2004 թվականին ներկայացված հանձնարարականները ներառում են հետևյալը.

- (ա) գերակայություն համարել 18 տարեկանը չլրացած անձանց գործերով զբաղվող հասուկ  
 դասարանների ստեղծումը,
- (բ) մշակել և իրականացնել այլընտրանքային միջոցներ՝ նվազեցնելու նախքան դասավարու-  
 թյունը կալանավորման և ազատությունից զրկելու հետ կապված դաշիժների կիրառումը և  
 սևողությունը,
- (գ) ադախովել անչափահասների ազասագրկման կիրառումը միայն ծայրահեղ դեղիքում՝  
 հնարավորինս կարճ ժամկետով, և իրավական օգնություն երեխաներին,
- (դ) ադախովել արդարադատության իրականացման գործընթացներում ներգրավված դասա-  
 խազների, դասավորների, փաստաբանների և այլ մասնագետների համար ուսուցողական  
 ծրագրերի դարբերաբար և հետևողական իրականացումը,
- (ե) մշակել ծրագրեր և տրամադրել հնարավորություններ անչափահասների ֆիզիկական և հո-  
 գեբանական վերականգնման և սոցիալական վերաինտեգրման համար<sup>20</sup>:

13 Ժողովրդագրական փոփոխությունների ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ սվյալները բացակայում են:  
 14 Անչափահասների վիճակն անչափահասների գաղութում, էջ 2 (աղջիկների իրավական կարգավիճակին անդրադարձ չի  
 կատարվել):  
 15 ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաներ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի  
 կողմից դասարանացված չհրադարակված և չթվագրված փաստաթուղթ, էջ 5:  
 16 Երեխայի իրավունքների կոմիտե, Հայաստանի նախնական զեկույց, CRC/C/28/Add.9: Երեխայի իրավունքների կոմիտե,  
 Անդամ երկրների կողմից Կոնվենցիայի 44-րդ հոդվածի հիման վրա ներկայացված զեկույցների ուսումնասիրություն,  
 Ամփոփիչ նկատառումներ Հայաստանի ներկայացրած նախնական զեկույցի վերաբերյալ, CRC/C/15/Add.119, 2000:  
 17 Երեխայի իրավունքների կոմիտե, Հայաստանի երկրորդ դարբերական զեկույց, CRC/C/93/Add.6: Երեխայի իրավունքների  
 կոմիտե, Անդամ երկրների կողմից Կոնվենցիայի 44-րդ հոդվածի հիման վրա ներկայացված զեկույցների ուսումնասի-  
 րություն, Ամփոփիչ նկատառումներ Հայաստանի ներկայացրած նախնական զեկույցի վերաբերյալ CRC/C/15/Add.225,  
 2004:  
 18 Երեխայի իրավունքների կոմիտե, CRC/C/15/Add.119, para.56 և CRC/C/15/Add.225, para.70:  
 19 Նույն տեղում (միակ մտահոգությունը, որն արտահայտվել էր 2000 թվականին և չէր վերահաստատվել 2004-ին, վերաբերում  
 էր անչափահասներին չափահասների հետ դաշիժում):  
 20 Նույն տեղում, para.71:

Անչափահասների գործերով արդարադատության բնագավառում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներգրավվածությունը սկսվել է 1998 թվականին անչափահասների համար նախատեսված ուղղիչ հիմնարկի լայնամասշտաբի ուսումնասիրությանը ցուցաբերված օժանդակությունից<sup>21</sup>: 2001-ին իրականացվել է իրավիճակի վերլուծություն, որը, սակայն, անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ծրագրի հաստատման չի հանգեցրել<sup>22</sup>: Սույն գնահատման առաջնության ժամանակ դասարանում էր ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և կառավարության միջև 2010-2015 թվականների համագործակցության ծրագիրը: Այն ներառելու է որոշ գործողություններ անչափահասների գործերով արդարադատության բնագավառում, սակայն առանձին ծրագիր չի նախատեսվում:

## Ամփոփում

Անչափահասների կողմից հանցագործությունների կատարումն անկախությանը և հարևան Ադրբեյջանի հետ հակամարտությանը հաջորդող տարիներին կարծես ավելացել է, սակայն 1998 թվականից սկսել է նվազել<sup>23</sup>, ընդ որում, ընթացիկ տասնամյակում հանցավորությունը հասել է ավելի ցածր մակարդակի, քան մինչև անկախությունը: Նույն կերպ, ազատագրված դատարաններ և կալանավորված անչափահասների թիվը 1998 թվականից ի վեր ավելի քան երկու երրորդով կրճատվել է: Գնահատման առաջնության ընթացքում դատարանային անչափահասների թիվը 18-ն էր (որից 4-5-ը՝ 18 տարեկանից բարձր), և 24-ը զսնվում էր կալանավորվածներին դառնալու վայրում:

Անչափահասների գործերով արդարադատության համակարգի կառուցվածքն անկախությունից ի վեր փչ է փոխվել: Դեռևս գործում է անչափահասների գործերով ոստիկանության ստորաբաժանումը, դեռևս գոյություն ունեն երկու հասուկ դորոցները, որտեղ ուսանում են անհայտ թվով, ֆրեական դատաստանվածության տարիքի չհասած իրավախախտներ ու ռիսկային խմբում ընդգրկված երեխաներ, մայրաքաղաքում դեռևս գործում է երեխաների աջակցության մեկ կենտրոն, շարունակում է գործել մեկ ուղղիչ հաստատություն ազատագրված դատարաններ, ևս մեկը՝ դատախազի կայացմանը սղատող կալանավորված անչափահասների համար, կան դատավորներ, ովքեր ֆունկցիոնալ են անչափահասների վերաբերյալ գործերը, սակայն անչափահասների գործերով մասնագիտացված դատարան դեռևս գոյություն չունի:

Այդուհանդերձ, այս հաստատություններից շատերը զգալի բարեփոխումների են ենթարկվել: Ոստիկանությունն ընդունելության և կողմնորոշման կենտրոնի (որը վերանվանվել է երեխաների աջակցության կենտրոն) կառավարումը վստահել է հասարակական կազմակերպությանը, որն այն վերակազմակերպել է ռիսկային իրավիճակում զսնվող երեխաների համար նախատեսված մոդելային կենտրոնի: Անչափահասների գործերով ոստիկանության ստորաբաժանումը, հասարակական կազմակերպությունների հետ համատեղ մասնակցում է նորարարական համայնքային կանխարգելիչ և վերականգնողական ծրագրերի: Անչափահասների համար նախատեսված ֆրեակատարողական հիմնարկում իրականացվող ֆաղափականությունն ու ծրագրերը բարելավվել են, չնայած վերականգնմանն ուղղված հստակ մոնիթորինգը դեռևս բացակայում է:

Հաստատվել են մի շարք նոր ծրագրեր և ստեղծվել են նոր հաստատություններ: Կառավարության հետ համատեղ Փրոջեթ Զարմոնի հասարակական կազմակերպությունը հիմնել և հաջողությամբ իրականացնում է կանխարգելման և վերականգնման ծրագիր, որը գործում է վեց ֆաղափներում և ներառվել է 2004-2015թթ. գործողությունների ազգային ծրագրում: Համայնքային դատարանի գրասենյակը ծառայություններ է մատուցում հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող անչափահասներին, իսկ հասարակական կազմակերպություններից կազմված խմբերն արժեքավոր ներդրում են անչափահասների գործերով արդարադատության համակարգի վերափոխման գործում:

Անչափահասների գործերով արդարադատության ոլորտը կարգավորող համադարձակ օրենքը բացա-

21 Անչափահասների կարգավիճակն անչափահասների գաղութում (հետազոտություն), Ժողովրդավարության և մարդու իրավունքների ազգային կենտրոն/ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Երևան, 1998թ.:

22 Պատճառն այն էր, որ «օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների» թիվը համարվել էր խիստ ցածր՝ այն որոշեց գերակայություն դիտելու համար:

23 CRC/C/93/Add.6, para.391, այստեղ մեջբերվում է Ներքին գործերի նախարարության ֆրեական դատարանի իրականացման վարչության տեղեկատվությունը (1990 թվականի 256 հանցագործություններից մինչև 403՝ 1995 թվականին):

կայում է: Ինչդեռ և խորհրդային ժամանակներում, անչափահաս կասկածյալների, մեղադրյալների ու դատադատյալների վերաբերյալ գործերը կարգավորվում են Քրեական օրենսգրքով, Քրեական դատավարության օրենսգրքով, Քրեակասարողական օրենսգրքով և մի շարք այլ օրենքներով ու կանոնակարգերով: Այդ օրենսդրության զգալի մասը լրջորեն փոփոխվել է, և այդ փոփոխությունների արդյունքում դրանց մի մասը համադասասխանեցվել է միջազգային չափանիշներին: Անչափահաս կասկածյալներն իրավական օգնության իրավունք ունեն ձեռքակալման, իսկ մեղադրյալները՝ մեղադրանքն առաջադրելու դեպքում: Պաշտպանի մասնակցությունը դատարանում է: Անչափահասին հանցագործություն կատարելու մեջ մեղադրելու դեպքում միայն դատարանը կարող է կալանավորման որոշում կայացնել: Ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անչափահասների նկատմամբ որդեխ խափանման միջոց կալանավորումը չի կարող կիրառվել: Ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար ազատազրկման ձևով դատարանը չի նշանակվում: Անչափահասների նկատմամբ ազատազրկումը կարող է նշանակվել առավելագույնը 10 ամիս ժամկետով, սակայն նրանցից ֆեյեր են դատադատվում ազատազրկման 5 ամիսով ավելի ժամկետով: Երեխաների իրավունքների վերաբերյալ վերադասարանները նշանակալի դրական ազդեցություն են ունեցել անչափահասների գործերով ուսիկանության և դատարանների համար:

Չնայած արձանագրված էական բարելավումներին, անհրաժեշտ է շարունակել դրանք: Մի շարք խնդիրներ հրատապ լուծումներ են դառնում: Ուսիկանությունն իրավասու է անչափահաս կասկածյալներին դառնել մինչև 72 ժամ: Տեղեկություններ կան չարաչափումների, երբեմն նաև խոցանակումների վերաբերյալ, և նման գործողություններն իրապես վերացնելու խոստումները չեն կարող բավարար համարվել: Անչափահաս դատադատյալների համար նախատեսված ֆրեակասարողական հիմնարկն անհատադ վերանորոգման կարիք ունի: Չնայած, որ կալանավորվածներին դառնում է համար նախատեսված հասվածի դայանմաները բարելավվել են, կիրառվում են ֆիզիկական վարժանքի և սեղաշարժի սահմանափակումներ, որոնք անհարի են կրթության, առողջության դառնումնան և մարդկային վերաբերմունքի հետ կապված իրավունքներին:

Օրենսդրության հետագա լրամշակման կարիք ևս կա: Քրեակասարողական հիմնարկների կանոնակարգերով դեռևս թույլատրվում է որդեխ տույժի միջոց մեղադրյալներին, ինչը միջազգային չափանիշների խախտում է համարվում: Մինչդասական կալանավորման վերաբերյալ իրավական չափանիշները խիստ անհասկ են, իսկ մինչդասական վարույթում և դատական ֆունկցիան փոխում անչափահասներին կալանքի սակ դառնում առավելագույն ժամկետը դեռ է կրճատվի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի հանձնարարականին համադասասխան: Նույն կերպ ուսիկանությունում առանց դատարանի որոշման ձեռքակալման ժամկետը դեռ է կրճատվի մինչև 24 ժամ: Եթե հասուկ դորոցներից մեկը կամ երկուսն էլ շարունակեն գոյություն ունենալ, ադա դրանք կարգավորող նորմերը, որոնք հիմնականում կանոնակարգերի տեսքով են, դեռ է փոխարինվեն միջազգային չափանիշներին համադասասխանող օրենսդրությամբ:

Գնահատման թիմը մշակել է այլ առաջարկներ ևս: Մասնավորապես.

- հանցավորության և կրկնահանցագործությունների կանխարգելման բնագավառում գործող հաստատությունների և իրականացվող ծրագրերի արդյունավետությունը դեռ է գնահատվի՝ ստանալու համար այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է համայնքային վերականգնողական կենտրոնների, ինչդեռ նաև՝ իրավական սոցիալականացման և հասուկ դորոցների ադադայի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:
- Անհրաժեշտ է ֆունդել անչափահասների վերաբերյալ ֆրեական գործերով մասնագիտացված ֆունդներ նշանակելու հնարավորությունը:
- Անհրաժեշտ է գնահատել երեխաների վերաբերյալ գործերով մասնագիտացված դատարանի անհրաժեշտությունը՝ միաժամանակ գնահատելով մասնագիտացված դատավորների կողմից իրենց դատարանությունների կատարման արդյունավետությունը:
- Անհրաժեշտ է տեղեկություն հավաքել ու վերլուծել դատադատյալ անչափահասների նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված և չկապված դատարանի ազդեցության (դրական և բացասական) վերաբերյալ՝ ներկայումս իրականացվող ֆադաֆականության և դրակսիկայի արդյունավետության վրա լույս սփռելու նդատակով:



- Անհրաժեշտ է ֆինել հասկալի անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ համադարձակ օրենք ընդունելու նդասակահարմարությունը՝ գործող օրենսդրությունում առկա այն բացերը լրացնելու նդասակով, որոնք վերաբերում են թե՛ անչափահասներին, թե՛ չափահասներին և անհամատեղելի են երեխաների իրավունքների հետ:
- Անհրաժեշտ է իրականացնել վերադաստատումներ իրավախախտների հոգեբանության, հանցավորության և կրկնահանցագործությունների (իրավախախտների վերականգնման), տուժած անչափահասների նկատմամբ վերաբերմունքի, ինչդես նաև րեաբանական հետազոտություններ կատարելու վերաբերյալ:
- Անհրաժեշտ է հզորացնել գոյություն ունեցող միջգերատեսչական համակարգման մեխանիզմները:
- Մարդու իրավունքների դաճողանի գրասենյակում անհրաժեշտ է ստեղծել երեխաների իրավունքների հետ կաղված հարցերով մասնագիտացված ստորաբաժանում:
- Անհրաժեշտ է մշակել անչափահասների գործերով արդարադատության ցուցիչներ և սարեկան կրվածով համադասասխան սվյալներ հրադարակել:

## Մաս I. Անչափահասների գործերով արդարադատության ընթացքը

### 1) Քաղաքականություն և ֆարոզություն

Երեխաների իրավունքների դաժնացման 2004-2015թթ. գործողությունների ազգային ծրագրի VII մասն անդադարառնում է օրենքի հետ խնդիրներ ունեցող անչափահասներին՝ երեխաների շրջանում թափառաբերական, թափախիմիզի և նրանց սեռական շահագործման համատեղում: Այն կոչ է անում առավել զգալի ջանքեր գործադրել անչափահաս իրավախախտներին և նրանց կողմից կատարված հանցագործությունները հայտնաբերելու, հանցավորությունը կանխելու և նրանց իրավունքները դաժնացնելու, այլընտրանքային դատախազներին առավել լայնորեն կիրառելու, ուղղիչ համակարգում զսնվող անչափահասների թիվը կրճատելու, ինչպես նաև դատաստանացու նախարարությունների, վիճակագրական և ուղղիչ ծառայությունների միջև համագործակցություն հաստատելու ուղղությամբ<sup>24</sup>:

Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման 2008-2012 թվականների դեռևս ծրագիրը ևս նախատեսում է գործողություններ՝ ուղղված հասկալի անչափահասների կողմից հանցագործությունների կատարմանը կանխելուն:

Ըստ էության, անչափահասների գործերով արդարադատության ազգային ռազմավարությունը բացակայում է: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բարձրաստիճան ներկայացուցիչը նշեց, որ իր կարծիքով, նման ռազմավարություն անհրաժեշտ է, հասկալի հասուկ դորոցների դերի առումով: Գնահատման թիվը համաձայն է, որ այդ դորոցների, Երեխաների աջակցության կենտրոնի, Համայնքային վերականգնողական կենտրոնների, ինչպես նաև ընդհանուր առմամբ համայնքային երկրորդային և երրորդային կանխարգելման և վերաինստեգրման ամբողջ բնագավառի վերաբերյալ ռազմավարության անհատալ ընդունումը գերակա խնդիր է: Իդեալական դարազայում անչափահասների գործերով արդարադատության ոլորտում այլընտրանքային ծառայությունները լիարժեք է անչափահասների գործերով արդարադատության համադարձակ ֆաղաքականության մի մասը հանդիսանում:

### 2) Օրենսդրական բարեփոխումներ

1995 թվականին ընդունված և 2005-ին վերանայված Սահմանադրությամբ ճանաչվում են անչափահասների արդարադատության ոլորտին առնչվող մի շարք իրավունքներ: Մեկ շարք անց ընդունված Երեխայի իրավունքների մասին օրենքում կա անչափահասների գործերով արդարադատությանն առնչվող երկու հոդված: 31-րդ հոդվածը ճանաչում է անձի անձեռնմխելիությունը, սկզբունքը, որ անչափահասի ձերբակալումը, խուզարկությունը և կալանավորումը կարող է սեղի ունենալ միայն օրենքով նախատեսված դեպքերում, երեխայի ձերբակալման կամ կալանավորման մասին ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին անհատալ հայտնելու դատարանությունը, իր, ծնողների կամ մեծավոր ազգականների դեմ ցուցմունք սալուց հրաժարվելու հնարավորությունը, ազատագրված դատավճիռը բողոքարկելու ազատագրված դատարարված անչափահասների իրավունքը, երեխային չափահասների հետ կալանքի սակ դառնելու արգելքը: 32-րդ հոդվածը, ի թիվս այլ իրավունքների, ճանաչում է հասուկ ուսումնական հաստատություններում զսնվող երեխաների հետևյալ իրավունքները՝ հարգալից վերաբերմունք, կրթություն, առողջության դառնում և ծնողների հետ տեսակցություն<sup>25</sup>:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը Երեխայի իրավունքների կոնվենցիային համադատաստանեցնելու համար 1999 թվականին իրականացվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Կոնվենցիայի համեմատական վերլուծություն<sup>26</sup>:

1998 թվականին ընդունվել և 1999-ին ուժի մեջ է մտել նոր Քրեական դատարարության օրենսգիրքը, իսկ նոր Քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 թվականին: Քրեական օրենսգրքի 1-ին և Քրեական

24 Երեխաների իրավունքների դաժնացման 2004-2015 թվականների գործողությունների ազգային ծրագիր, UNICEF, Երևան, 2005 թվական:  
 25 Որքան էլ սարօրինակ է, դեռևս նախնիների ներկայացուցիչները նույն էին, որ այս հոդվածը չի վերաբերում գոյություն ունեցող հաստատություններից և ոչ մեկին:  
 26 Երեխայի իրավունքների կոնվենցիայի, Ամփոփիչ նկատառումներ, Հայաստանի երկրորդ դարձրեական զեկույց, CRC/C/15/Add.225, para.25:

դասավարության օրենսգրքի 2-րդ գլուխներն ընդգրկում են դասաճ ընթացակարգերի վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային դրույթներով ճանաչված երաշխիքների մեծամասնությունը, ինչ-դեպ, ստեմ, օրինականության և օրենքի առջև բոլոր անձանց հավասարության սկզբունքը, անկախ և անկողմնակալ դասարանի կողմից արդար և հրադարակային քննության իրավունքը, անմեղության կանխավարկածը, դաճադան ունենալու իրավունքը, սեփական անմեղությունն ադադուցելու դար-սավորության բադակայությունը, միևնույն հանգադործության համար երկրորդ անգամ դասադարսելու արգելքը, ձերբակալության կամ կալանավորման հիմքերի, ինչդեպ նաև մեղաադրվող հանգադործու-թյան փաստական հանգամանքների և իրավաբանական որակման մասին անհադաղ սեղեկանալու յուրահանչյուր ձերբակալվածի և կալանավորվածի իրավունքը<sup>27</sup>: Խոճանգումները և դաճան, անմարդ-կային և նվասադող վերաբերմունքն արգելված են Սահմանադրությամբ, Քրեական օրենսգրքով, Քրեական դասավարության օրենսգրքով, ինչդեպ նաև 1996 թվականին ընդունված Երեխայի իր-վունքների մասին օրենքով<sup>28</sup>:

Նոր Քրեակասարողական օրենսգիրքն ընդունվել է 2004 թվականին և դարունակում է հողված անչա-փահաս դասադարսյալի դաշիճը կրելու առանձնահասկությունների մասին<sup>29</sup>: Մի շարք այլ հողված-ներով մախասեստված են առավել արսոնյալ իրավունքներ անչափահասների համար՝ կադված սեսակ-ցությունների, զբոսանքի ու կարգադահողության հեք: Նույն կերդ «Ձերբակալված և կալանավորված անձանց դահելու մասին» օրենքը մախասեստում է մեկ հողված՝ կանանց և անչափահասներին արգե-լանքի կամ կալանքի սակ դահելու առանձնահասկությունների մասին, ինչդեպ նաև՝ երկու այլ հող-վածներ՝ անչափահասներին սննդով ադահողվելու և նրանց նկասմամբ սույճի միջոցներ կիրառելու վերաբերյալ<sup>30</sup>:

2001 թվականին նեանակալի փոփոխություններ են կասարվել Քրեական դասավարության օրենսգրքում<sup>31</sup>: Մասնավորադես, առանց դասարանի որոճան կասկածյալներին արգելանքի սակ դահելու ճամկեսն 96 ճամից կրճասվել է մինչև 72 ճամ: 2006 թվականին օրենսգրքում կասարված փոփոխությամբ ճանաչվել է րեական դասավարությանը մասնակցող անձանց դաճադանության իրավունքը<sup>32</sup>, իսկ գնահասման առաքելության ընթացքում նոր փոփոխությունների մեճ փաթեթ էր մա-խադարաստվում:

Այդհանով հանդերձ, անչափահասների գործերով արդարադասության ոլորսը կարգավորող համադար-փակ օրենքը բադակայում է, իսկ անչափահաս դասադարսյալների, մեղադրյալների ու կասկածյալնե-րի վերաբերյալ Քրեական օրենսգրքի և Քրեական դասավարության օրենսգրքի գլուխները համադոս են և չեն արսադոլում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 37-րդ և 40-րդ հողվածներում նեված հիմնարար սկզբունքները<sup>33</sup>: Անազասության մեջ գսնվողների վերաբերյալ օրենսդրությունը դարունա-

27 Քրեական դասավարության օրենսգրքի 4-11 հողվածներ, սես նաև 13-րդ հողվածը, որը բադադում է րեական օրենքի հեքադարձ ուճը՝ արարքի հանգավորություն սահմանելու, դաշիճը խսադցնելու կամ հանգամ կասարած անձի վիճակն այլ կերդ վաթարադցնելու դեդերում: Քրեական դասավարության օրենսգրքի 10-21 հողվածներ:

28 Սահմանադրության 17-րդ հողված, Քրեական օրենսգրքի 11.2, 119-րդ և 341-րդ հողվածներ, 7-րդ հողված և Երեխայի իրավունքների մասին օրենքի 9-րդ հողված (Քրեական օրենսգրքի 119-րդ հողվածով մախասեստված խոճանգման համար դաշիճը սահմանափակվում է երեք սարի ճամկեսով ազասադրկմամբ, եթե ճանրադող հանգամանքները բադակայում են):

29 Քրեակասարողական օրենսգիրք, 109-րդ հողված:

30 «Ձերբակալված և կալանավորված անձանց դահելու մասին» օրենքի համադասախանարար 27-րդ, 19-րդ և 35-րդ հողվածներ:

31 Քրեական դասավարության օրենսգիրքը փոփոխվել է երեք անգամ. «Հայասանի Հանրադեսության րեական դասավարության օրենսգրքում փոփոխություններ կասարելու մասին» 2001թ. դեկտեմբերի 12-ի օրենք, «Փասաբանական գործունեության մասին» Հայասանի Հանրադեսության օրենքում, Հայասանի Հանրադեսության փողադադակական դասավարության օրենսգրքում և Հայասանի Հանրադեսության րեական դասավարության օրենսգրքում փոփոխություններ կասարելու մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի օրենք:

32 «Հայասանի Հանրադեսության րեական դասավարության օրենսգրքում փոփոխություններ կասարելու մասին» 2006 թվականի մայիսի 25-ի օրենք: Այս օրենքով փոփոխվել է նաև օրենսգրքի XII գլուխը (98-99-րդ հողվածներ), որը մանրամասն սահմանում է րեական դասավարությանը մասնակցող բոլոր անձանց (սուճողների, վկաների, մեղադրյալների, նրանց ընսանիքի անդամների) դաճադանության միջոցները, նրանց անձնական սվյալների դաճադանության ընթացակարգերը, նրանց իրավունքներն ու դարսականությունները և այլն:

33 Քրեական օրենսգրքի 14-րդ գլուխը, որը վերաբերում է անչափահասների րեական դասախանասվության և դաճի առանձնահասկություններին, դարունակում է սասներկու հողված, իսկ Քրեական դասավարության օրենսգրքի 50-րդ գլուխը, որ սահմանում է անչափահասների գործերով վարույթի առանձնահասկությունները՝ 5 հողված:

կում է որոշ դրույթներ, որոնք չեն համադասասխանում միջազգային չափանիշներին, ինչպես, ասեմբլայն դրույթները, որոնք թույլատրում են որոշ սույժի միջոց անչափահասներին 5-ից 10 օր տեղավորել մենախցերում<sup>34</sup>:

Գնահատման թիւը եզրակացնում է, որ չնայած անչափահաս իրավախախտների վերաբերյալ օրենսդրությունում կատարվել են էական փոփոխություններ, որոշ օրենքների դարազայում անհրաժեշտ է հետագա լրամշակում:

### 3) Վարչական և կառուցվածային բարեփոխումներ

2001 թվականին բանսային համակարգը Ներքին գործերի նախարարությունից փոխանցվեց արդարադատության նախարարությանը: Այս ադարազակաճանաչումը մեծադեպ նույնպես է անչափահասներին և չափահասներին դաժանաբար և իրականացվող ֆաղափականությունն առավել մարդասիրական հիմքերի վրա դնելուն:

2007 թվականից ի վեր Գլխավոր դասախազությունը հանցագործությունների ֆննդության գործառույթ չի իրականացնում: Այդ գործառույթն այժմ հանձնվել է Ոստիկանության ֆննչական գլխավոր վարչությանը: Քանի որ Դասախազության գործառույթները ներառում են նաև դեռահաս ծառայողների կողմից օրենքի դաժանաբար կատարման նկատմամբ հսկողությունը, ֆննչների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու դեղիում կարող է լաիերի բախում տեղի ունենալ:

Անկախության առաջին տարիներին Անչափահասների գործերով հանձնաժողովները դադարեցին գոյություն ունենալ: Դրանք վերստեղծվեցին Վարչադեղի 1999 թվականի մի որոշմամբ, սակայն դրանց գործառույթները 2000 թվականին վերադաճվեցին Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին<sup>35</sup>: 2006 թվականին մարդատարաններում ստեղծվեցին երեխայի իրավունքների դաժանաբարության բաժիններ (այսուհետ՝ ԵԻԴԲ): Դրանց թիվը տասնմեկն է՝ մեկը՝ մայրաքաղաքում և մեկական՝ Զայասանի Զանադեղության մարզերից յուրաքանչյուրում: Ի տարբերություն Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և Անչափահասների գործերով նախկին հանձնաժողովների, ԵԻԴԲ-ները համալրված են վարձատրվող փոքր անձնակազմով, այդ թվում՝ հոգաբարձուներ, սոցիալական աշխատողներ, մանկավարժներ և առողջադաիության ոլորտի մասնագետներ: Նրանց դերը նկարագրված է ստորև՝ կանխարգելման վերաբերյալ գլխում: Նրանց աշխատանքային մեթոդները դեռևս մշակման փուլում են, իսկ նրանց լիազորությունները բավականին հեղու են անչափահասների հանցավորության խնդիրներից, չնայած, որ նրանք ի գորու են արժեքավոր դեռակատարություն ունենալ կանխարգելման, ֆրեական արարներում ներգրավված, ֆրեական դասախաճանաչության տարիքի չհասած երեխաների աջակցության, ինչպես նաև՝ ազատվելուց հետո իրավախախտ անչափահասներին աջակցություն և օժանդակություն ցուցաբերելու հարցերում: Եվրամիությունն իրականացրել է ԵԻԴԲ կարողությունների զարգացման եռամյա ծրագիր, որն ավարտվել է 2009 թվականին<sup>36</sup>:

### 4) Առկա ռեսուրսների բախումը

ԵԻԴԲ բաժինների անձնակազմը կարող է կրճատվել ֆինանսական ճգնաժամի հետևանքով: Եզնաժամի արդյունքում նաև հետաճվել է անչափահաս դասադարսյալների համար նախատեսված ֆրեակատարողական հիմնարկի վերանորոգումը, սակայն այն չի անդադարձել անչափահաս կալանավորվածների և դասադարսյալների համար նախատեսված ֆրեակատարողական հիմնարկի գործառնական ծախսերի վրա: Բանսային համակարգում աշխատող հոգաբարձուների և սոցիալական աշխատողների աշխատանքային ծանաբեռնվածությունը վերջիններիս թույլ չի տալիս հավուր դասաճի իրականացնելու իրենց խնդիրները: Մարդու իրավունքների դաժանաբար գրասենյակում երեխաների իրավունքների հարցերով ստորաբաժանում չստեղծելու դաժանաբար ևս ֆինանսական բնույթի են:

34 «Ձերբակալված և կալանավորված անձանց դաժանաբար մասին» 2002 թվականի օրենք, հոդված 35 (5 օր անչափահաս կալանավորվածների համար) և 2004 թվականին ընդունված Զրեակատարողական օրենսգիրք, հոդված 95 (10 օր անչափահաս դասադարսյալների համար): Անչափահասներին մենախցում տեղավորելն արգելված է ստորև հիշատակված Զավանայի կանոններով:

35 Ձեկույց Զայասանում անչափահասների գործերով արդարադատության և հանցավորության վերաբերյալ:

36 Ծրագրի լաիառնների թվում էին նաև խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները:

Ֆինանսական խնդիրները նշանակալի ազդեցություն չեն ունեցել անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ներգրավված այլ մարմինների բյուջեների վրա, օրինակ՝ անչափահասների գործերով նսիկանության:

Իրավադատ մարմինների և արդարադատության իրականացման բնագավառներում (օրինակ՝ բաների անձնակազմի և դատավորների դատաբանություն) աշխատավարձերը մի քանի տարի շարունակ բարձրացել են՝ մասնագիտական կարողությունների զարգացման և կոռուպցիայի դեմ դայվարի ռազմավարության շրջանակներում: Մասնագետների մեծամասնությունը գտնում է, որ այդ ռազմավարությունն արդյունավետ է եղել, չնայած որ չարաճառումներն ու կոռուպցիան չեն կարող իսպառ վերացվել: Համարային դատախազների աշխատավարձերը հաճախակի են դատախազների աշխատավարձի չափով. ֆաղափարություն, որի նդատակն է երաշխավորել մատուցվող ծառայությունների որակը և հարգել ֆրեական դատախազության կողմերի հավասարության սկզբունքը: Այդ աշխատավարձերի չափը դատախազներին է՝ չնայած վերջին ֆինանսական ճգնաժամի ազդեցությանը:

Ընդհանուր առմամբ, ռեսուրսների անբավարարությունը կարծես թե էադես չի կարող խոչընդոտել անչափահասների գործերով արդարադատության համակարգը միջազգային չափանիւներին համատարասանեցնելուն ուղղված ջանքերին:

### 5) Վերադատարանում և կարողությունների ձևավորում

Անչափահասների գործերով արդարադատության բնագավառում ներգրավված մասնագետների մեծամասնությունը վերջին տարիներին անցել է երեխաների իրավունքների և հարակից թեմաների շուրջ որոշ վերադատարանումներ, և որոշակի առաջընթաց է արձանագրվել երեխաների իրավունքների վերաբերյալ վերադատարանները կանոնավոր (գերատեսչական) հիմքերի վրա դնելու ուղղությամբ, հասկադես նսիկանության դատաբանություն:

Արդարադատության նախարարությունը և Դատավորների միությունը 2003 թվականին կազմակերպել են վերադատարանում ծրագրեր՝ նախքան նոր Զրեական օրենսգրիքն ուժի մեջ մտնելը: Առաջին ասյանի գրեթե բոլոր դատավորները և վերաբանիչ դատավորների մի մասը մասնակցել է դրանց: Մեկ տարի անց իրականացվել է երեխաների և կանանց իրավունքների վերաբերյալ վերադատարանում ծրագիր, որին մասնակցել է մեկական դատավոր՝ առաջին ասյանի յուրաքանչյուր դատարանից: Դատընթացը, որն Արդարադատության նախարարությունն իրականացրել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ, ուղղված էր նոր Զրեական օրենսգրիքի այն դրույթներին, որոնք առնչվում են կանանց ու երեխաներին, ինչդես նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային և միջազգային այլ չափանիւներին, երեխայի զարգացմանն ու հոգեբանությանը և դատական դրակսիկայում դրանք գործի դնելու հմտություններին:

2003-2005 թվականներին Արդարադատության նախարարությունը սեմինարներ է անցկացրել ֆրեականատարական ծառայողների համար՝ ֆրեականատարական համակարգում անչափահասների հանդեպ վերաբերմունքի իրավական ու կրթական ասդեկները շուրջ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված վերադատարանում նդատակն էր զարգացնել երեխաների ու կանանց հես աշխատող ֆրեականատարական անձնակազմի կարողությունները՝ զարգացնելով նրանց հմտություններն ու փոխելով մոտեցումները: 2004 թվականին իրականացված վերադատարանում ընթացում նաև անդրադարձ է կատարվել ֆրեական օրենսգրիքի և օրենսդրական այլ ակտերի նոր դրույթներին: Ներկայումս ֆրեականատարական ծառայողների վերադատարանում դատարանության կողող Նախարարության իրավաբանական ինստիտուտն է: Յուրաքանչյուր ֆրեականատարական ծառայող դատարանում է առնվազն հինգ տարի մեկ անգամ անցնել վերադատարանում դատընթաց, որը ներառում է «մարդու իրավունքներ» առարկան (1-2 դասաժամ), որի շրջանակներում անդրադարձ է կատարվում երեխաների իրավունքներին:

Երեխաների իրավունքները որդես առարկա ընդգրկված է Ոսիկանության ակադեմիայի ուսումնական ծրագրում, որի ժամանակ օգտագործվում է անչափահաս իրավախախտների և հանցագործությունից տուժած անչափահասների հես վարվեցողության մասին ձեռնարկը: Անցկացվող դատընթացը, ինչդես նաև նշված ձեռնարկն անդրադարձում են այնդիսի խնդիրների, ինչդիսիք են երեխաների հարցախոնությունը, բռնության նախանշաններն ու ադացույցները, երեխաների հես վարվեցողության կանոնները:

Անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ իրականացված վերադասարանների արդյունավետությունը չի գնահատվել, սակայն շատ մասնագետներ գտնում են, որ այն դրական ազդեցություն է ունեցել անչափահասների գործերով արդարադատության վրա, հասկալիքս նուսիկանության և դասարանների մասով:

**6) Հաշվետվողականության մեխանիզմներ**

2003 թվականին հիմնվել է Մարդու իրավունքների դաշտային գրասենյակը: Այն երեխաների իրավունքների դաշտայինության հարցերով զբաղվող ստորաբաժանում չունի, սակայն երեխաների իրավունքների խախտման վերաբերյալ բողոքներ ընդունում է<sup>37</sup>:

Երկու անկախ խմբեր վերահսկողություն են իրականացնում ազատությունից զրկված անձանց հանդեպ վերաբերմունքի խնդիրների նկատմամբ: Դրանցից մեկը հիմնվել է 2004 թվականին՝ արդարադատության նախարարության ենթակայության ներքո գտնվող ֆրեակասարողական հիմնարկների համար, և մյուսը 2006 թվականին՝ Ոստիկանության ենթակայությամբ գործող ձերբակալվածներին դաշտային վայրերի համար<sup>38</sup>: Անկախ մոնիթորինգ իրականացնելու նրանց գործառնություններն ու լիազորությունները ճանաչված են օրենքով<sup>39</sup>: Երկուսն էլ ներկայացնում են սարեկան, ընթացիկ զեկույցներ, իսկ հրատարակում են անհատական արձանագրություններ: Նրանց մանրագրեր ներառում է թե՛ անհատների նկատմամբ ֆիզիկական չարաժառանգումների և թե՛ ազատազրկման, կալանավորման կամ արգելափակման դրամային մոնիթորինգը: Տարբեր աղբյուրներ նշում են, որ այդ խմբերի ստեղծումը և դրանց գործունեությունը նշանակալի ներդրում է ունեցել ազատազրկված, կալանավորված կամ ձերբակալված անձանց նկատմամբ վերաբերմունքը բարելավելու գործում:

Հարցման ենթարկվածները համաձայնեցին, որ անչափահասների նկատմամբ ֆիզիկական չարաժառանգումներն այլևս չեն չունեն Արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող ազատազրկման դասադասարանների և կալանավորված անձանց դաշտային վայրում: Ոստիկանության մոնիթորինգի խումբը լուրջում է, իսկ մեկ այլ աղբյուր՝ հաստատում, որ ձերբակալվածների նկատմամբ ոստիկանության կողմից ֆիզիկական չարաժառանգումներ, երբեմն նաև խոցանակման դեպքեր չեն ունենում են նախան կասկածյալներին կալանավորվածներին դաշտային վայրեր փոխադրելը: Մոնիթորինգի խմբի անդամներից մեկը գնահատման թիմին տեղեկացրեց, որ մի 17-ամյա կասկածյալ տղայի նկատմամբ Երևանի ձերբակալվածներին դաշտային վայրում կիրառվել է ծեծ և էլեկտրոսոսն՝ գնահատման սույն առաջնությունն իրականացնելու ժամանակահատվածում: Այդ դեպքը ֆնուության են առել Ոստիկանությունը, Դատախազությունը և Մարդու իրավունքների դաշտային:

Որքանով մեծ տեղեկացանք, ոստիկանության որևէ աշխատող երբևէ դատախազության չի ենթարկվել կամ դատախազի կասկածյալի նկատմամբ դաժան կամ անմարդկային վերաբերմունքի համար, անկախ այն բանից՝ կասկածյալը չափահաս է, թե՛ անչափահաս: Մոնիթորինգի խմբերն արժեքավոր ծառայություն են մատուցում անչափահաս (և չափահաս) կասկածյալների, մեղադրյալների և դատադատարարների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը վերահսկելու հարցում, և դա, անկասկած, հանդիսանում է դրական փորձ, որը կարող են ընդօրինակել այլ երկրները: Սակայն նրանց ջանքերը բավարար չեն հաշվետվողականությունը երաշխավորելու համար: Հանրային դաշտային գնահատման թիմին տեղեկացրեց, որ որոշ դեպքերում դատարանը որոշեց ադաջույց չի ընդունել հարկադրանքի միջոցով կորզված ցուցմունքները, իսկ մի հասարակական կազմակերպության ներկայացուցիչ նշեց, որ շատ են դեպքերը, երբ դատարաններն անտեսում են չարաժառանգումների վերաբերյալ ամբաստանյալների հայտարարությունները: Հաշվետվողականությունն իրավասու մարմիններից դաշտայինում է ֆաղափական կամ ֆննելու և ֆրեական հետադարձման ենթարկելու այն դաշտայիններին, ովքեր խախտում են բանտարկյալների իրավունքները: Սրա կարիքը, կարծես թե, դեռևս կա:

37 2008 թվականի ընթացքում՝ տասնմեկ բողոք: Բոլոր բողոքները ներկայացվել են ծնողների կողմից, և դրանցից որևէ մեկը չի առնչվել անչափահասների գործերով արդարադատությանը:

38 Դրանց լրիվ անվանումն է՝ Ոստիկանության համակարգի ձերբակալվածներին դաշտային վայրերի հասարակական դիտորդների խումբ և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ենթակայության ֆրեակասարողական հիմնարկների նկատմամբ հանրային մոնիթորինգի հասարակական դիտորդների խումբ:

39 2002 թվականի փետրվարի 6-ին ընդունված «Ձերբակալված և կալանավորված անձանց դաշտային մասին» օրենքի 47-րդ հոդված և Ձերբակասարողական օրենսգրքի 21-րդ հոդված:

## 7) Համակարգում

Անչափահասների գործերով արդարադատության համակարգի արբեր մասերի միջև համակարգումը խիստ անբավարար է: Պետական դատարաններից մեկը նույն հետևյալը. «Յուրաֆանչյուր ոլորտ աշխատում է առանձին, թիմային աշխատանք չկա»: Հասարակական կազմակերպության մի ներկայացուցիչ էլ համաձայնեց այդ մտքին՝ նշելով, որ «անհրաժեշտ են առավել շարունակական ծառայություններ»: Բերվեցին որոշ օրինակներ, այդ թվում՝ ֆրեակասարողական համակարգի սոցիալական աշխատողների անկարողությունը՝ համայնֆային որևէ մարմնի հետ համակարգելու և համաձայնեցնելու ազատությունից զրկված անչափահասների ընթացիկներին ծառայություններ մատուցելու հարցերը կամ աջակցությունը ազատազրկումից հետո ընթացիկում կամ համայնքում վերաինստեղծելու հարցում: Երեխաների աջակցության կենտրոնի ղեկավարը նույն, որ ըստ անհրաժեշտության սեղի են ունենում խորհրդակցություններ՝ այս կամ այն «բարդ» դեպքում վարելու վերաբերյալ: Սակայն ընդհանուր առմամբ ակնհայտ է, որ դեպքերի վարման մակարդակում համակարգումը հասկանալի է և անբավարար:

Սկզբունքորեն Երեխաների իրավունքների դաշտանության ազգային հանձնաժողովի գործառնություններից մեկն է «առաջարկություններ ներկայացնել դատական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ»: Այդուհանդերձ, հանձնաժողովը միայն վերջերս է վերսկսել հանդիմել՝ ավելի քան 18 ամսվա ընդմիջումից հետո: Անչափահասների գործերով արդարադատության հարցերով աշխատանքային խմբի ստեղծումը՝ ընդգրկելով Հանձնաժողովի անդամներից մի քանիսին (կամ նրանց ներկայացուցիչներին), ինչպես նաև ֆաղափարակալական հասարակության ներկայացուցիչներին, կնոյաստեր ինչպես սեղակալական մակարդակում համագործակցությանը, այնպես էլ կոզներ մշակել անչափահասների գործերով արդարադատության ընդգրկում և ներդաշնակ ազգային ֆաղափարակալություն, ինչպես նաև՝ մոնիթորինգի ենթակալել իրավախախտումները, իրավադատ գործունեությունը, դատավճիռների կայացումը, վերականգնումը և վերաինստեղծումը հասարակությանը:

## 8) Տեղեկատվություն և հետազոտություններ

